

IDNYC դիմումի հրահանգներ

IDNYC ԶԱՐՏԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԶԱՄԱՐ ԴՈՒՔ ԴԵՏԵ Ե ԶԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՆԵ ՅԵՏԵՎՅԱԼ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ

- Առնվազն փաստաթղթերի 4 միավոր, ներառյալ առնվազն 3 միավորը ինքնության հաստատման և առնվազն 1 միավորը՝ բնակության հաստատման:
- Ներկայացված փաստաթղթերից առնվազն 1-ը պետք է պարունակի լուսանկար, եթե դիմողին չի ուղեկցում խնամատուն:
- Ներկայացված փաստաթղթերից առնվազն 1-ը պետք է պարունակի ծննդյան ամսաթիվը:
Ժամկետանց փաստաթղթեր չեն ընդունվի, եթե միայն հատուկ նշված չեն IDNYC Փաստաթղթերի ուղեցույցում:
Ընդունվում են միայն բնօրինակ փաստաթղթերը և թողարկող գործակալության կողմից հավաստագրված պատճենները, լամինացված փաստաթղթերը կընդունվեն միայն այն դեպքում, եթե դրանց բնօրինակը թողարկվել է լամինացված վիճակում:

ԱՆՈՒՆԵՐԻ ԶԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձեր բոլոր փաստաթղթերում նշված անունները պետք է համապատասխանեն միմյանց: IDNYC թարտի դիմումի մեջ նշված անունը պետք է լինի նույնը, ինչ որ նշված է Ձեր անձը հաստատող ամենաբարձր արժեքի փաստաթղթում (օրինակ՝ անձնագիր, վարորդական իրավունքի վկայական, ծննդյան վկայական, հյուպատոսական ID և այլն), բացառությամբ, եթե Դուք ներկայացնեք նաև դատարանի որոշում, ամուսնության վկայական կամ պետության կողմից տրված մեկ այլ փաստաթուղթ, որը հաստատում է անվան օրինական փոփոխությունը: Այն դեպքում, եթե դիմողը ներկայացնում է երկու նույնականացնող փաստաթուղթ, որոնք ունեն հավասար միավորներ, IDNYC-ի դիմումում պետք է նշվի այն փաստաթղթի անունը, որտեղ առկա է լուսանկար:

10-13 ՏԱՐԵԿԱՆ ԴԻՄՈՂՆԵՐ

IDNYC թարտին դիմելու նվազագույն տարիքը 10-ն է: 10-13 տարեկան բոլոր դիմողները պետք է դիմեն խնամատուի հետ, ով կստորագրի դիմումը: Դեռևս է տրամադրել արտակարգ իրավիճակի կոնտակտային տվյալ և կարելի է բաց թողնել թարտի վրայի հասցեն:

ԱՈՒՆՑ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՍՏԱՏՄԱՆ ԶԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԴԻՄՈՂՆԵՐ

Անկախ տարիքից, հաշմանդամություն ունեցող դիմողները, որոնք չունեն լուսանկարով ինքնության փաստաթուղթ կամ հասցեի ապացույց, կարող են դիմել, եթե նրանց ուղեկցում է խնամատուն, ով կարող է ապացուցել իր փոխհարաբերությունը դիմողի հետ: Ցանկացած տարիքի դիմողների համար իրավասու խնամատու կարող են լինել՝ NY նահանգի Չարգացման հաշմանդամություն ունեցող անձանց վարչության (OPWDD), NYS-ի Առողջապահության վարչության (NYS DOH), Նյու Յորք նահանգի Մտավոր առողջության վարչության (NYS OMH), NYC-ի Առողջապահության և մտավոր հիգիենայի վարչության (NYC DOHMH), ACS-ի, ACS-ի նշանակված ֆոստերային խնամքի գործակալության **լիազորված աշխատակիցները**, կամ OPWDD, NYS DOH կամ NYC DOHMH-ի մատակարարները, ներառյալ OPWDD-ի, NYS OMH-ի, NYS DOH-ի կամ NYC DOHMH-ի կողմից շահագործվող, հավաստագրված, վկայագրված կամ ֆինանսավորվող **խնամքի տրամադրման բնակելի հաստատության աշխատակիցները**, այն **դիմողի հետ համատեղ ապրող անձինք**, որը OPWDD-ի կողմից սահմանվել է որպես զարգացման հաշմանդամություն ունեցող անձ, կամ դիմողի Սոցիալական ապահովագրության Վճարը ստացող ներկայացուցիչը:

ԽՆԱՄԱՏՈՒ ԿԵՏ ԴԻՄՈՂ ԲՈԼՈՐ ԴԻՄՈՂՆԵՐԸ

Խնամատուի հետ դիմող անձը պետք է ներկայացնի առնվազն 2 միավորի փաստաթուղթ՝ հաստատելով ինքնությունը, ներառյալ ծննդյան ամսաթիվը: Դիմողը և խնամատուն նաև պետք է ներկայացնեն խնամատուի հետ փոխհարաբերության ապացույցը, ինչպես նշված է IDNYC-ի Փաստաթղթերի ուղեցույցի խնամատու բաժնում: Խնամատուն պետք է տրամադրի առնվազն 3 միավորի փաստաթղթեր՝ հաստատելով իր ինքնությունը, ներառյալ լուսանկարով նույնականացում: Եթե դիմողը չունի բնակության հաստատման փաստաթուղթ և բնակվում է խնամատուի հետ, ապա խնամատուն կարող է սահմանել իր իսկ բնակության ապացույցը, օգտագործելով IDNYC Փաստաթղթերի ուղեցույցում նշված բնակության փաստաթղթերից մեկը, և տրամադրել վավերացում, որ դիմողը բնակվում է խնամատուի հետ: Բոլոր խնամատուները պետք է ստորագրեն IDNYC դիմումը: Աշխատակիցները, որոնք հանդես են գալիս որպես խնամատու, պետք է ներկայացնեն աշխատողի իրենց ID-ները:

ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՅՆ ԴԻՄՈՂՆԵՐԻ ԶԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ԱՆՕԹԵՎԱՆ ԵՆ ԿԱՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՈՒԹՅԱՆ ՉՈՂ

Դիմողը, որը բնակվում է անօթևանների կացարանում, կարող է ներկայացնել կացարանի հասցեով նամակ՝ նշելով, որ բնակվել է այդտեղ առնվազն 15 օր, և որ կացարանը թույլատրում է բնակիչներին մնալ կացարանում առնվազն 30 օր: Զարտի վրա կտպվի կացարանի հասցեն: Դիմողը, որը չունի բնակության հասցե կամ ընտանեկան բնության գոհ է, պետք է ապացուցի բնակությունը Նյու Յորք Սիթիում, սակայն կարող է նշանակել հասարակական կազմակերպությանը կամ կրոնական հաստատությանը, որոնց հասցեն կտպվի թարտի վրա որպես դիմողի խնամատարության հասցե, կամ թարտի վրա հասցե չի տպվի: IDNYC թարտերը, որոնք չունեն հասցե, կամ որոնց վրա տպված են խնամատուի հասցեն, հնարավոր է չընդունվեն որոշ հանգամանքներում:

Դիմողը, որը ներկայացնում է ապացույց, որ ինքը NYS-ի Գաղտնի հասցեի ծրագրի անդամ է կամ բնակվում է NYC-ի ընտանեկան բնության գոհերի կացարանում, պետք է նաև ապացուցի, որ բնակվում են Նյու Յորք Սիթիում: Նրանց IDNYC թարտը կարող է պարունակել փոստային դասիչը կամ չպարունակել որևէ հասցե:

IDNYC ԶԱՐՏԻ ՆՈՐԱՑՈՒ

IDNYC թարտերը կարող են վերականգնվել թարտի ժամկետը սպառվելուց 60 օր առաջ: Վերականգնման ժամանակահատվածը սկսվում է թարտի ժամկետի ավարտից 60 օր առաջ և ավարտվում է 6 ամիս հետո: Ժամկետի ավարտից ավելի քան 6 ամիս հետո թարտի համար դիմող անձը կդիտարկվի որպես նոր դիմող: Թարտերի վերականգնումների հետ կապված օգնություն ստանալու համար այցելեք IDNYC-ի Անդամագրման կենտրոն:

ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԶԱՐՏԵՐ

Կորցված, գողացված կամ վնասված թարտը փոխարինելու դիմումի համար գանձվում է 10 ԱՄՆ դոլարի չափով վճար, եթե կարիքի իրավունքից հրաժարումը չի ստորագրվել: Դուք պետք է անձամբ վճարեք և ներկայացնեք Ձեր փոխարինման դիմումը IDNYC-ի Անդամագրման կենտրոնի Ֆինանսական բաժին:

